ԻՆՔՆԱԿԱՄ ՈՒՂԵԳՐՈՒՄ ՀՈՍՊԻՍ

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՈՒՂԵԳՐԵԼ ՀՈՍՊԻՍ:

Հոսպիսի համար բժշկի ուղեգիր հարկավոր չէ: Յուրաքանչյուր ոք, լինի դա ընտանիքի անդամ, ընկեր, հոգևորական, թե բժիշկ, կարող է ինչ-որ մեկին ուղղորդել հոսպիս:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ՈՒՂԵԳՐԵԼ ՀՈՍՊԻՍ:

Զանգահարեք Ձեր նախընտրած հոսպիս՝ քննարկելու Ձեր կամ Ձեր հարազատի վիճակը: Դուք կարող եք զանգահարել մի քանի հոսպիս՝ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար այն մասին, թե ինչն է համապատասխանում Ձեզ և Ձեր ընտանիքին: Երբ զանգահարեք հոսպիս, խնդրեք խոսել ընդունարանի բուժքրոջ հետ: Հարցրեք՝ արդյո՞ք նրանք ընդունում են Ձեր ապահովագրությունը:

Ի՞ՆՉ ԱՅԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԿԱՆ ՀՈՍՊԻՍԻ ՈՒՂԵԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

Եթե Դուք նախընտրում եք ուղղակիորեն չզանգել հոսպիս, Դուք այլ տարբերակներ ունեք: Դուք կարող եք խոսել Ձեր առաջնային բուժօգնության բժշկի հետ: Կարող եք նաև խոսել սոցիալական աշխատողի կամ Ձեր բժշկի գրասենյակում գտնվող մեկ այլ անձի հետ, ում հետ Ձեզ հարմարավետ եք զգում:

Ի՞ՆՉ ԿԼԻՆԻ ՀԵՏՈ:

Հոսպիսը ժամանակ և վայր կնշանակի Ձեզ հանդիպելու և իրենց մատուցած ծառայությունների մասին խոսելու համար:
Հանդիպումը կարող է լինել Ձեր տանը, հիվանդանոցում, խնամքի հաստատությունում կամ մոտակա հասարակական վայրում, օրինակ՝ սրճարան կամ գրադարան: Հոսպիս տեղեկատվական այցելությունները անվճար են: Հոսպիսը կարող է ունենալ հոսպիս ընդունելության ձև, որը Դուք պետք է լրացնեք: Նրանք կարող են նաև խոսել Ձեր բժշկի հետ՝ անհրաժեշտ ծրագրեր կազմելու համար:

Հոսպիսի նպատակը Ձեր վերջին ամիսներին, շաբաթներին ու օրերին Ձեր կյանքի որակը բարելավելն է:

MOQC
MICHIGAN ONCOLOGY QUALITY CONSORTIUM

Blue Cross Blue Shield of Michigan

Nonprofit corporations and independent licensees of the Blue Cross and Blue Shield Association